ՅՈԳՍԷՓ ՏԷ—ԱՍՏԻՃԻՍ

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱՆԱՆ ԴԱՍԱՆԱՐԴԻ ՄԷՋ

(Տես յէջ 48)

ԸՆՏԱՆԻՔ

Լաւ անտեսեալ տունը որդւոց համար ընտրելագոյն դրահանգ մ՚է. յետոյ կու գայ դպրոցը և հուսկ մեծ ընկերութիւնն գործնական կենաց մէջ։ Ընտանեաց մէջ բաւական է մայրական գգուանքը՝ տղայութիւնը զուարթ պահելու համար, արժանաւոր սէրն ինքն կրնայ միայն մխիթարել կեանքը. և քիչ մը երախտագէտ սէր՝ ծերութեան օրհնութիւն է։

Երանի՛ անոր որ բախտ ունեցած է բարի և պարկեշտ ընտանեաց զաւակ ըլլալու. ինչպիսի՛ քաղցրութիւն կրնայ զգալ հոն, և ինչպիսի՛ ներքին և գորովական սիրով և սերտիւ կը միանան ծնողք և որդիք։ Ինչպիսի՛ բարեսրտութեան և խաղաղութեան առաւօտ մը կը տարածուի մի և նոյն արիւն ունեցող այս անձանց մէջ, որ և հասարակաց սիրոյ զգացմամբ կը զգան իրը մի եղեալ իրարու հետ։ Թող գայ երգելու բանաստեղծն, միայնակ փիլիսոփան իւր ուրախութիւններն և երջանկութիւնը. կրնան ճշմարիտ ըլլալ, բայց աղօտ և ոժգոյն լոյս մ՚է այն համեմատութեամբ ընտանեկան առաքինութեանց մէջ գըտնուած պայծառ ճառագայթին։

Գասթէլար բացայայտ կը զրուցէր Սպանիոյ Ակադեմիային մէջ թէ հայրական տունէն դուրս ուրիշ դպրոց չեմ՚ճանչնար առաքինութեան, և Պաքոն կ՚ըսէր թէ հայրենեաց սէրը՝ի սիրոյ ընտանեաց կը սկսի։ Ընտանիքն սրտին հայրենիքն է, կ՚ըսէր, ուրիշ մը, իրը սըրբազան է մեզ համար, իրը անբաժանելի պայման մ՚է կենաց, և կը մերժենք որ և է յարձակումն որ կ՚ընեն հակառակ ասոր սուտ և վայրենամիտ փիլիսոփայութեամբ լցեալ անձինք կամ անզգոյշք և

digitised by A.R.A.R.@

գրգռելք հոգւով, տեսնելով զնա շատ անգամ իբր բոյն անձնասի-
րութեան, և կը կարծեն որ դեղն է վերցնել զայն բոլորովին՝ բարբա-
ռոսաց նմանելով։

Դժբաղդ են յիրաւի անոնք որ ժամանակէն առաջ որբ կը մնան
իրենց ծնողքէն, և թողեալ են երեսի վրայ առանց իսկ ճանչնալու ի-
րենց ծնողք. այլ կրկին թշուառ են բազմութիւն անմեղ տղաք, որ
առանց պաշտպան մ՚ունենալու կը կրեն բարբարոսական չարչա-
րանքներ և ամենանգութ տառապանքներ իրենց անողորմ ծնողաց
ձեռքէն, և որոնք շատ անգամ պատճառ կ՚ըլլան տաժանելի հիւան-
դութեանց, բնական տձեւութեանց և հուսկ ուրեմն մահուան. և
յայտ՚ բան զգալն չար են, որոց բնական է սէր և պաշտպանու-
թիւն իրենց ձագուց։ Բարերաղդաբար քաղաքական ընկերութեան
կողմանէ մեր ատեններն մարդասիրական ընկերութիւնք կան՝ ի
պաշտպանութիւն այնչափ զոհերու, և այնպիսի գործ մ՚է այս՝ որ ա-
մենայն բարի անձինք պէտք է մտադիր ըլլան այս բարերար վախճա-
նին, ցերութեան գործակից ըլլալով փրկաւէտ օրինակներով։

Մարդկային գործոց ընթացքն ընտանեաց մէջ ակնելով, հայրա-
կան պատերն պէտք է առաջին մրցանաց տեղի ըլլան։ կարելի չէ
որ հայրենիքը սիրէ անձ մը դիւցազնութիւն ցուցնելով, եթէ նախ
որդիական սիրելութեան պարտուց մէջ կը պակի. հազիւ թէ տը-
դուն միտքը կը բացուի պարտուց դաղափարն իմանալու, ծածուկ և
խորհրդական ձայն մը կ՚ըսէ. Պատուէ և սիրէ ծնողդդ։ Ա.յնչափ զօ-
բաւոր է որդիական սիրոյ բնազդեցութիւնը, որ ամենեին պէտք չը-
կայ խնամոց բուսնեղակ կենաց մէջ արթուն պահելու համար զայն.
բայց և լաւագոյն բնազդեցութեանց այ պէտք է մեր բարի կամաց
հաստատութիւնը, ապա թէ ոչ կը թուլնան և կը տկարանան. պէտք
է որ բարեսիրութիւնն առ ծնողս՝ի գործ դնենք հաստատուն առա-
ջադրութեամբ։ Ընդհանուր կանոն է, ոչ երբէք բարի քաղաքացի
կ՚ըլլայ ով որ նախ յառաջ քան զամենայն չի հոգար և չի սիրեր իր
ընտանիքը։

Կրօնքն պէտք է ըլլայ հիմն ընտանեաց, և թշուառաց և նեղելոց
միսիթարութիւնն այս աշխարհիս մէջ, որոնք մարդկութեան տասին
հիներորդ մասը կը կազմեն։ Ցիրաւի ինչ աւելի սփոփական բան կայ
նեղելոց համար՝ որոնք ընկերութեան երեսի վրայ մնացած անդամք կը
համարին քան զայս հանդերձեալ կենաց։ Նոբակրօնք, դուք որ ընկերա-
կան վիճակն բարւոքելու և միսիթարելու երևութով կը ջանաք ձեր գա-
ղափարներուն վերցնել այս թշուառ աթարածներէն իրենց միակ յոյսը
որ է հանդերձեալ լաւագոյն կեանքը, և որոնք այսու պիտի կրնան միա-
բան մնալ անքակտելի իրենց սիրելեաց հետ, ինչ պատճառաւ և վախ-
ճանաւ կ՚ընէք զայս. առ ինչ ընդել կ՚ուզէք այսպիսի քաղցր յոյս մը.
և ինչ կ՚ընծայէք իրենց՝ փոխարէն ձեր առածին։

digitised by A.R.A.R.@

Ամենայն ինչ կրօնիւք կը շարժի, գրեց Կիկերոն։ Ընհատատն կ'ուզէ ուրանալ զԱստուած և զկրօնս, բայց իր պատճառաբանութեանց մէջ կը ստիպուի այնպիսի ազդու բաներ գործածել՝ որ կը լեցնեն պարապ տեղն որ կը մնայ զաստուածութիւն մերժելով։ Իրաց կարգն որ մեր զգայարանաց առջեւ ունինք, ևս առաւել մեր հոգւոյն մէջ եղած կարգը՝ միտքան կը ցուցնեն մեզ Աստուծոյ գոյութիւնը, մինչև անգամ վոլթէր ըսաւ. « եթէ Աստուած չըլլար, պէտք էր հնարել »։ Նիւթական աշխարհքը կը ցուցնէ մեզ մատամբ զԱստուած, մեր խելքն զմեզ կը հաւանեցնէ, սիրտն կը համոզէ. մարդկային ընկերութիւնը, իր յաժարութիւնները ամենայն ինչ կը յայտնէ մեզ գերագոյն Աստուած մը. և կան բազմաթիւ խորհրդական երևոյթներ զորս մեկնելու համար պէտք է ընդունինք այս սկիզբը։

Ով որ պատիւ կը համարի անձին սիրել զԱստուած, սիրել ըզմարդկութիւն, սիրել զհայրենիս, կ'ըսէ Բեռլիդոյ, ինչպէս պիտի չի յարգէ մեծապէս զանոնք որոց ձեռքով եղաւ արարած Աստուծոյ, մարդ և քաղաքացի. և կը յաւելու. եթէ մէկն կ'անարգէ զսուրբ սեղանս, զսրբութիւն ամուսնական, զընտանիս, զպատիւ և յետոյ կը գոչէ, Հայրենիք, հայրենիք. մի հաւատաք իրեն հայրենասիրութեան. կեղծիք մ'է, չարագոյն քաղաքացին է։

Արդի ժամանակներս ընկերութիւնը վեր'ի վար ընելու համար, կ'ուզեն ջնջել զկրօնս և զընտանիս, տեսնելով կարգաւորութեան այս հիմանց մէջ արգելք մը իրենց անառակ յաժարութեանց հասնելու համար։ Արդէն ընտանեաց խանգարումը այլ և այլ երկիրներու մէջ սկսած է. և յայտնապէս կը տեսնենք վերջին ազգահամարին մէջ 'ի Գաղղիա Սէնի գաւառին (département) մէջ 64,287 ծնընդոց մէջ 15,965 ապօրինաւոր գտնուեցան, այսինքն չորրորդ մասն գրեթէ...

Կրօնքն և ընտանիքն ամենասերտ կապ մ'են որ կը միացնեն ազանձնական անձինքն ընկերական կարգին հետ։

Գործաւորն որ իրիկուն տուն կը դառնայ հոգնած, պէտք ունի գտնելու հոն յետ իր աշխատութեանց փափաքած հանգիստն և խաղաղ կցորդութիւն սրտագրաւ սիրով. և ա՛ռ այս կը գոչէ Լիվի առողջաբանն. Սիրեցէք, ժողովուրդք, ձեր տունը. սիրեցէք, վասն զի երբ ըլլայ առողջաւէտ, ընդարձակ, մաքուր օդով, ձեր մեծագոյն մխիթարութիւններէն մէկն պիտի ըլլայ. սիրեցէք, որպէս զի յետ դարձին յաշխատութենէ՝ ձեր սիրելեաց հետ խաղաղութեամբ հանգչիք, և հեռու չի կենաք անտի մոնալու համար արբեցութեան և մոլութեանց մէջ ձեր թշուառութիւնքը. սիրեցէք, որպէս զի զօրացընէք զկապ որ զձեզ կը միացնէ ընտանեաց հետ և չի տկարացնէ զայն. սիրեցէք, որպէս զի ձեր որդիքն ալ սորվին սիրել զայն և քաղաքա-

digitised by A.R.A.R.@

կան առաքինութեանց այս ճշմարիտ խանութին մէջ զարգանան ա-
ռաքինութեամբ և օգտակար ըլլան հայրենեաց. չըլլան ցոփ և անա-
ռակ երիտասարդք, որով ֆիզիքական խոտորումը հացնէ ապա
բարոյական խոտորման, և անարգ ախտիւք և մոլութեամբք վերջապէս
կործանեն թէ զիրենք և թէ զընտանիս։

Նա է տէր անձին՝ որ գիտէ պէտքերն հնազանդեցնել մտաց, և
միտքն Աստուծոյ. բայց ցաւալին այն է որ մարդկային վիճակին մէջ
եղած մեր միտքն վախճանք կը ցուցնէ մեզ, կիրքերն շատ անգամ կը
հեռացնեն զմեզ անտի։

Միակ և պարզ գիծ մ'է սահմանն որ կը բաժնէ զբարին 'ի չարէ.
և այս գիծն է պարարքը։ Վայ այն անձին որ այս գծէն դուրս կ'ելլէ.
և անդունդն՝ առ որ կը յառաջէ այն թշուառականը՝ այնչափ աւելի
վտանգաւոր է, որչափ զառ 'ի վայրն 'ի սկզբան հաճոյական և գրեթէ
անզգալի։

ԴԱԳԱՂ ՇԻՆՈՂԸ

(Տես հատ. ԺԸ. յէջ 448)

Հիւրք իրարմէ բաժնուեցան ուշ ատեն ու մեծաւ մասամբ գինով։
Գէր հացագործը և կազմարարը՝ օրուն դէմքը, կարծես, կարմիր
կազմի կաշւոյ գոյն առած էր, Եուռքոյին թեռ տուած, առին տարին
մինչև իւր խուղը, նկատելով յայսմ դիպի Ռուսի առածը թէ՝ «Պարտ-
քը վճարմամբ կը գեղեցկանայ»։ Դագաղ շինողը տուն դարձաւ
հարբած ու զայրացած. — Իրաւունք, ինչ է սա, կը մրմռայր ինք ի-
րեն, ինչով իմ արուեստս ատորին է ուրիշներէն. միթէ դագաղ շի-
նողը դահճի եղբայր է. ինչ բանի կը ծիծաղին այդ անհաւատները.
միթէ դագաղ շինողը խեղճատակ է։ Մտքէս կ'անցնէր նոցա հրաւի-
րել ինձ 'ի նոր բնակութիւն փառաւոր խնջոյքով մի հարկելու. բայց
ոչ, լինելու չէ այդ։ Պիտի հրաւիրեմ, յիրաւի, զնոսա որոց համար
կ'աշխատիմ — ուղղափառ մեռեալները։ —

— Է՛հ, ինչ է ասածդ. ասաց աղախինը նորա ոտքի կոշիկը քաշե-
լով. ինչ է այդ աւելորդ խօսքերդ. երեսդ խաչ հանէ. ինչ ասել է
հրաւիրել մեռեալք 'ի նոր բնակութիւն. ինչ սարսափելի բան։

— «Աստուած վկայ, պիտի հրաւիրեմ, շարունակեց Ադրիանոս,
անմիջապէս վաղուան օրը պիտի հրաւիրեմ։ Խնդրեմ, խնդրեմ, իմ
բարերարքս, վաղը երեկոյ ի սեղան ճաշկերոյթի, պիտի հարկեմ ձեզ
ինչ որ Աստուած պարգևել է։— Այսպէս ասելով, դագաղ շինողը
մօտեցաւ անկողնին ու շտապ խորդալով խոր քունի գնաց։

Գիշերը դեռ մութ էր երբ Ադրիանոսին զարթեցուցին։ Տիկինն
Տրիւֆին վախճանել էր նոյն իսկ այն գիշերը. ու մանաւոր կերպով

digitised by A.R.A.R.@